

յանի, Ա. Սարգսյանի, երիտասարդ ստեղծագործողների արվեստանոցներում, մեկնել են Մոսկվա ու Լենինգրադ, ծանոթացել ուսանական ու եվրոպական արվեստի խոշորագույն հուշարձաններին:

Պատկերասրահում տրադիցիա է դարձել այսպես կոչված «բաց դռների օրը», երբ արվեստասերները հնարավորություն են ունենում ծանոթանալու սովետահայ արվեստագետների հետ, զրուցելու նրանց ստեղծագործական հեռանկարների մասին:

Պատկերասրահի պրոպագանդիստական գործունեությանը զգալիորեն նպաստել է կատալոգների, առանձին աշխատանքների ռեպրոդուկցիաների, դրանց նվիրված փոքր բրոշյուրների հրատարակումը:

Պատկերասրահի գործունեության մյուս կարևոր կողմը էքսպոնատների պահպանման գործն է: Շենքի որոշ անհարմարությունը, անկասկած, խոչընդոտ է հանդիսանում ստեղծագործությունների լայն ցուցադրմանն ու նրանց պահպանմանը (թանգարանային տեսակետից նրանի կլիմայական պայմանները հատկապես անպատեհ են), սակայն Պատկերասրահում արվում է ամեն ինչ՝ արվեստի գործերի կյանքը երկարաձգելու նպատակով: Պահպանման բաժնում կատարվող հմուտ հաշվառումը, ստեղծա-

գործությունների նկարագրումը, դասավորումն ու պահպանումը երկարաձգում են նրանց կյանքը: Այդ գործին մեծապես նպաստում է Պատկերասրահի ռեստավրացիոն արվեստանոցի աշխատանքը, որի շնորհիվ բազմաթիվ ստեղծագործություններ ստացել են նոր հնչողականություն:

Պատկերասրահում պահպանվող ամեն մի իրի «կենսագրությանը» կարելի է ծանոթանալ այն քարտերի միջոցով, որոնք ընդգրկում են տվյալ աշխատանքի հետ կապված բոլոր ցուցահանդեսները, բիրլիոտդրաֆիկ նյութերը, նրա նկարագրությունը, վիճակը և ողջ կյանքի պատմությունը:

Ընդամենը քառասուն տարեկան է Հայաստանի պետական պատկերասրահը: Սակայն այդ կարճ ժամանակամիջոցն անգամ բավական է եղել, որպեսզի հավաքած ստեղծագործությունների քանակով, նրանց որակով, իր բազմակողմանի գիտահետազոտական ու պրոպագանդիստական գործունեությամբ նա կարողանա դասվել Միության խոշորագույն թանգարանների շարքը և դառնալ ռեսպուբլիկայի մշակույթի կարևոր ու լավագույն օջախներից մեկը:

Մ. ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱԿԵՍԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ

Strapie Der Nersessian. *The Armenian Chronicle of the Constable Smpad or of the „Royal Historian“* (Սմբատ Դուկ-պրստարի կամ Եսրբունի պատմիչի հայոց տարեկիրքը), Dumbarton Oaks Papers, XII, 1959, էջ 141—168: Գրված է Սմբատ Գուհ-դրստարի երկի նոր հրատարակության կապակցությամբ (Ս. Աղելյան, Սմբատայ Սպարապետի տարեկիրք, Վենետիկ, 1956): Բաղդատությունը ցույց է տալիս, որ հրատարակված է այն գրչագիրը, որը հատվածաբար լույս է ընծայել ժամանակին Ղ. Ալիշանը (Հայապատում, Ի, էջ 412, 436—441): Հոգվածագիրը գալիս է այն եզրակացության, որ Եսրբունի տարեկիրքի հեղինակը Սմբատն է, և նրա երկը ամրողջությամբ պահպանվել վենետիկի գրչագրում, մինչդեռ Մոսկվայում և ապա Փարիզում հրապարակված էջմիածնի ձեռագրերը պահպանել են համառոտված խմբագրությունը որոշ հավելումներով: Սմբատի տարեկիրքը շարադրված է Մատթեոս

Ուհայեցու և նրա շարունակողի հիման վրա (951—1162 թթ.), ապա՝ ինքնուրույն է: Երազրությունը կանգ է առնում 1272 թ. դեպրերի վրա, որից հետո մեկ թերթ ընկած է: Իր գործը Սմբատը հասցրել է մինչև 1274 կամ ամենաուշը՝ 1275 թ., որովհետև 1276 թ. վախճանվել է:

Vahan M. Kurkjian, *A History of Armenia* (Հայոց պատմություն), Armenian Benevolent Union of America, New York, 1958, p. (VII) 526, նկարագարող Հայոց պատմության ակնարկներ՝ հնագույն շրջանից մինչև մեր օրերը: Հատուկ գլուխ է նվիրված ֆեոդալական սիստեմին Հայաստանում (էջ 311—328), որոշ տեղ է հատկացված նաև հայոց մշակույթի տարբեր ընդգծվածքներին: 404—500 էջերում տրվում է մատենագիտական ցանկ, որն ընդգրկում է նաև սովետական գիտնականների աշխատությունները (աշխատությունների վերնագրերը արված են

միայն անդերևն թարգմանությունը, ուստի երբեմն զժվար է կոտակ այս կամ այն երկրում լեզուն): Ավարտվում է առասպելական նահապետների և թագավորների ժամանակագրական ապրումներով, ունի անուանների ցանկ:

H. Throssian, *Histoire de l'Arménie et du peuple arménien* (Հայաստանի և հայ ժողովրդի պատմություն), Paris, 1957, 240 էջ, 3 քարտեզ և ներդիր նկարներ: Հայոց պատմության համառոտ ակնարկ՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Պատմական է աշխարհային (աշխարհագրական բնութագիր, հայերի ծագումը, լեզուն) և 19 դարի, որոնք շոշափում են հետևյալ հարցերը. 1. Նախահայոց Հայաստան (նվիրված է Ուրարտուն): 2. Առասպելական պատմություն. 3. Վավերական պատմության սկիզբը. 4. Արշակունյաց հարստությունը. 5. Հայկական ֆեոդալական հասարակություն. 6. Հայերի դիմադրությունը V դարում. 7. Հայաստանն արաբական զերիշխանության տակ. 8. Բագրատունյաց հարստությունը. 9. Հայաստանի տնտեսական բարգավաճումը. 10. Ռուրիկյան հարստությունը. 11. Հայերը անկախությունը կորցնելուց հետո. 12. Օտար լծից ազատագրվելու փորձեր. 13. Հայ ժողովուրդը Ռուսաստանի, Պարսկաստանի և Թուրքիայի զերիշխանության տակ. 14. Հայոց հարցը. 15. Հայաստանը 1914—1918 թթ. պատերազմից հետո. 16. Դիլիկիան 1918—1921 թթ. 17. Սևրի գաղնագրությունը (1920) մինչև Լոզանի գաղնագրությունը (1923). 18. Նոր Հայաստան (սովետական շրջան). 19. Հայոց հարցը 1939—1945 թթ. պատերազմից հետո: Աշխատությանը կցված է մատենագիտական դանկ, որը պարունակում է հայագիտական աշխատություններ արևմտաևվրոպական լեզուներով, ինչպես նաև սկզբնաղբյուրների ևվրոպական թարգմանությունների: Երբի վերջին մասը կազմում են 10 հավելված, որոնք բաղված են մեծ մասամբ այլ հեղինակների աշխատություններից: Սովետական զիտնականների զործերը գրքում արձագանք չեն գտել:

M. I. Oos, *Deux contributions a l'histoire des pauliciens*. 1. A propos les sources grecques reflectant les pauliciens, 2. Origine du nom des pauliciens (Երկու ներդրում պալիկյանների պատմության մեջ. 1. Պալիկյաններին վերաբերող հունարեն աղբյուրների մասին. 2. Պալիկյանների անվան ծագումը): Byzantinoslavica XVII, (1956) 1,

էջ 19—57, XVIII (1957) 2, էջ 202—217: Պետրոս Սիկիլիացու «Մանիքեցիների պատմությունը» ամբողջական մի երկ է, ինչպես և նույն հեղինակի 6 քարտեզ: Ավարտվել է 869 թ. կա՛րիչ ուշ: Պետրոս Վանականին վերագրված աշխատությունը (Ֆրիդրիխ հրատարակած խմբագրություն) համառոտություն չէ, այլ նույն Պետրոս Սիկիլիացու առանձին ակնարկը, որը գրվել է «Պատմություններից» առաջ: Իրենց անունը Պալիկյանները ստացել են Գեղնեսիոսի և Տիմոթեոսի հայր Պողոս Հայագնից, որը ապրել է VII դ. վերջերին և VIII դ. սկիզբներին, հունարեն παυλικιστοι անունը ծագում է հայերեն պալիկիանից:

Siraple Der Nersessian, *An Armenian Version of the Homilies of the Harrowing of Hell* (Յաղագս իջանելոյ ի դժոխս բնագրի մի հայկական խմբագրություն), Dumbarton Oaks Papers, 8, 1954, էջ 201—224: Սույն քարտեզը պահպանվել է Երուսաղեմի № 1293 գրչագրում, որը բնագրի նակվել է Էրիմում 1363 թ., հայոց խմբագրությունը զգալիորեն տարբերվում է հունարենից:

V. Banateanu, *Ein vernachlässigter Zweig der armenischen Kunst. die Mosaik* (Հայոց արվեստի մի անտեսված ճյուղ՝ մոզաիկա), Byzantinoslavica, XIX (1958) 1, էջ 107—118 (9 ներդիր նկարով): Գտնիում, Երուսաղեմում, Զվարթնոցում, Իվինում հայտնաբերված մոզաիկաների տեսություն, հոգվածագիրը հենվում է Հ. Ստրիգովսկու, Թ. Թորմանյանի, Բ. Ստարելյանի, Կ. Ղաֆադարյանի, Ա. Գրիգորյանի, Սիրարի Տեր-Ներսեսյանի աշխատությունների վրա:

1. Scharf, *Zur Echtheitsfrage der Manichäerbücher des Photios* (Փոտի մանիքեցիների նկատմամբ գրքերի վավերականության հարցը), Byzantinische Zeitschrift, 44 (1951) 1/2, էջ 487—494: Փոտ պատրիարքին վերագրվող գրքերը պատկանում են պալիկյան շարժման կարևորագույն աղբյուրների թվին: Դ գրքի առաջարանից պարզ է, որ հեղինակը Փոտն է: Բաղդատելով Աստվածաշնչից մեջբերումներ կատարելու եղանակը, հոգվածագիրը ապացուցում է, որ Բ և Գ գրքերը պատկանում են նույն անձնավորությանը: Ա զերբը՝ Պետրոս Սիկիլիացու աշխատության վերամշակում է, կոտարված 872 թ. ոչ շատ ուշ:

F. Schneidweiler, *Paulikianerprobleme* (Պավլիկյանության պրոբլեմը), *Byzantinische Zeitschrift*, 43 (1950) 1, s. 10–39, 2, s. 366–384: Պավլիկյան ուսմունքի սկզբնաղբյուրների վերլուծություն: Փոստի աշխատությունը (և դիրքը) անարժեք է. պավլիկյանության զնահատման համար կարևոր են հերետիկոսությունից հրաժարման նապաստանները, էսկուրիալի զրջադիրը (Scor. I Φ 1) և Պետրոս Սիկիլիացու Պատմությունը: Սիկիլիացին հավանաբար Նշված սրչազրույցի պահպանված տեղեկության հեղինակն է: Նախապես զբաղվել է Պատմությունը առանձնի, 22 և մասամբ 23 դիտել և վերջաբանի, այդ աղբյուրից է բխում էսկուրիալի համառոտ տեղեկությունը, որը և օգտագործել է Գեորգ Վանականը, ապա Պետրոս Սիկիլիացին զբաղվել է իր 6 «խոսքերով» 870 թ. հեղինակը մեկնում է պավլիկյանների Տիվրիկ քաղաքը և այնտեղ վերամշակում ու ավարտում իր դործը:

Պավլիկյանությունը ձևունդ է առնում մարկիոնիտությունից: 342–388 թթ. Նշված է հայոց աղբյուրների տեսությունը. «Բանալի ճշմարտություն» դավանական եր-

կում հեղինակը նշմարում է բազմաթիվ զրույթներ, որոնք զալիս են II–III դդ. բրիտանիկությունից:

Erroll F. Rhodes, *An Annotated List of Armenian New Testament Manuscripts* (Նոր կտակարան պարունակող հայոց ձեռագրերի նորագրված ցուցակ), *Annual Report of Theology, Monograph Series*, vol. 1, Department of Christian Studies, Rikkyo (St. Paul's) University Ikebukuro, Tokyo, Japan, 1959, 192 էջ: Նորագրված է 1244 ձեռագիր, մեծ մասամբ եղած զրականության և յուցակների հիման վրա: Ընդգրկված է 20 երկիր՝ Ավստրիա, Բելգիա, Բուլղարիա, Կիպրոս, Դանիա, Լեհիա, Ֆրանսիա, Դերմանիա, Իրան, Իռլանդիա, Իտալիա, Զորգանան, Լիբանան, Նիդերլանդիա, Ռումինիա, Սերբիա, Թուրքիա, Սովետական Միություն, ԱՄՆ. 1167–1244 համարների տակ զրանցված զրականության վայրը որոշել է հաջողվում: Աշխատությունը կցված է մատենագիտական ցուցակ (p. p. VII–XIII) և երեք ցանկ:

Կ. ՅՈՒՐԵՆԿՅԱՆ

О ЧЕРЕПАХ ИЗ ЭНЕОЛИТИЧЕСКИХ ПОГРЕБЕНИЙ В РАЙОНЕ ШЕНГАВИТА

Во время работ Шенгавитской археологической экспедиции в окрестностях Еревана (начальник экспедиции — С. Сардарян) было добыто пять черепов, относящихся к энеолитической эпохе.

15 августа 1959 г. мы раскопали одно погребение, вокруг которого и сверху лежали небольшие валуны. На глубине одного метра было обнаружено четыре скелета с уцелевшими черепами. Три черепа принадлежали взрослым; сохранность хорошая, но отсутствовали нижние челюсти. Остатки четвертого разбитого черепа принадлежали ребенку. Вокруг скелетов были расставлены глиняные кувшины; один из них — большой, с красным ангобом, внутренняя сторона также красная. Эта особенность керамики рассматриваемого погребения отличает ее от той, которая обнаружена в нижних слоях энеолита данного поселения. Захоронение было сделано в верхнем (IV) культурном слое. В погребении найдены золотое кольцо, золотая подвеска, серебря-

ные серьги и другие украшения. Вокруг погребения была прямоугольная ограда наподобие жилой комнаты: стены ее сделаны были из больших плоских и круглых андезито-базальтовых галек, по всей вероятности добытых из реки Раздан. Длина ограды 7,5 метра, ширина — 4,5 метра.

На расстоянии одного метра от этого погребения было найдено другое погребение, где обнаружены два черепа, причем лицевой отдел черепов, особенно носовые кости, разбиты. От одного черепа найден фрагмент нижней челюсти. Керамика здесь совершенно отсутствовала.

Результаты археологических исследований в Шенгавите имеют важное значение для освещения энеолитической культуры всего Кавказа. Открытые в Шенгавите постройки представляют собой общинные жилища, сложенные из гальки и сырцового кирпича. По всей вероятности, круглые постройки с окружающими прямоугольными